

## ԿԱՐՄԻՔ

Հայցորդ Կարեն Սեդրակի Թոխաթյանի  
«Հայաստանի Ժայռապատկերների տիպաբանությունը և  
պատմամշակութային նշանակությունը»

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Աշխատանքի արդիականությունը: Հին Եվրասիայի մշակութային կարևոր երևույթներից է ժայռապատկերային արվեստը, որն ի հայտ է գալիս նաև Հայկական լեռնաշխարհի սահմաններում: Հայաստանը ժայռապատկերային արվեստի առանցքային մի գոտի է, դրսևորում է առանձնահատկություններ, բայց ունի նաև զուգահեռներ երկրի սահմաններից դուրս: Ժայռապատկերները Հայաստանում նախկինում ևս ուսումնասիրվել են, սակայն դրանք երբեք չեն ներկայացվել այն մանրամասնությամբ, հարցադրումների այն սպեկտրով և կիրառված մեթոդների այն բազմազանությամբ, ինչ քննարկվող ատենախոսության մեջ է: Հետևապես այս աշխատանքը խիստ կարևոր է և արդիական իր նշանակությամբ՝ թե՛ տարածաշրջանային, և թե՛ միջտարածաշրջանային համատեքստում:

Հետազոտության կառուցվածքը և ձևավորումը: Հետազոտությունը բաղկացած է երկու հատորից. I հատոր՝ տեքստ (ներածական հատված, երեք գլուխ՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններ, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ), II հատոր՝ հավելվածներ (քարտեզներ, ցանկեր, աղյուսակներ): Աշխատանքն ունի տրամաբանական կառուցվածք, որում նախ ներկայացվում է հետազոտության աշխարհագրական միջավայրը, ժամանակագրական համատեքստը, ժայռապատկերների ուսումնասիրության պատմությունը, դրանց առանձնահատկությունները (Գլուխ Ա), ապա առանձին բերվում են հնաստղագիտական հուշարձանները (Գլուխ Բ), որից հետո ներկայացվում է ժայռապատկերաբանական գիտելիքի կիրառումը պատմամշակութաբանական խնդիրներում՝ հատուկ անդրադարձ կատարելով ժայռապատկերների թվագրությանը և դրանց առնչությանը օրացույցին և տոմարին (Գլուխ Գ): Աշխատանքն ավարտվում է եզրակացություններով, որոնցում ամփոփվում են ուսումնասիրության հիմնական ձեռքբերումները և բացահայտված օրինաչափությունները:

Աշխատանքը շարադրված է պարզ ու մատչելի լեզվով, հեղինակի արտահայտած մտքերը հասկանալի են, եզրակացությունները համապատասխանում են բովանդակությամբ:

յանը: Ձևավորումն իրականացված է արհեստավարժորեն: Կատարված ուսումնասիրության արդյունքում ի մի են բերված առկա հիմնական տվյալները, որով ընդհանուր պատկեր է ստացվում Հայաստանի ժայռապատկերային արվեստի վերաբերյալ: Ատենախոսության մեջ պահպանված են գիտական էթիկայի կանոնները. հեղինակը լավ ծանոթ է սուրբ մասնագիտական գրականությանը և մշտապես հղում է դրանք:

### **Աշխատանքի հիմնական արժեքը:**

1. Հայագիտության բնագավառում առաջին անգամ մեկտեղված են հնագիտական, արվեստաբանական, պատմական բոլոր նյութերը ժայռապատկերային արվեստի վերաբերյալ: Եթե նախկինում եղել են անդրադարձներ քննարկվող խնդրին, ապա նման համակարգվածությամբ դրանք երբեք չեն իրականացվել:

2. Աշխատանքում կիրառվում է նյութի գրանցման, մեկնության, տիպաբանման առաջադիմական մեթոդաբանություն, որը հնարավոր է դարձնում երևույթի բազմակողմանի քննարկումը, ինչը երբեք չի իրականացվել հայագիտության մեջ:

3. Աշխատանքում շրջանառվում են մեծ քանակության չհրատարակված նյութեր: Մասնավորապես, հեղինակը ներկայացնում է 4000 ժայռապատկերային միավորից բաղկացած տվյալների շտեմարան, որից 3500-ը նորահայտ՝ վերջին տասնամյակներից:

4. Ատենախոսության մեջ որոշակիացվում են ժայռապատկերների տեսակները, թեմային և ոճական բաշխումը: Մշակվել է դրանց՝ 365 բնութագրերով դասակարգման համակարգ, ըստ որի, յուրաքանչյուրը նկարագրվում է յոթ խմբում ամփոփված 365 տվյալով, որոնք բնութագրում են ժայռապատկերը որպես հնագիտական միավոր, քարաբեկորը, պատկերակիր մակերեսը, պատկեր կազմող ակոսը, պատկերը, խմբայնությունը, բնապատմական միջավայրը:

5. Հատկապես կարևոր են ժայռապատկերների մասին այն վերլուծությունները, որոնք արտահայտված են ցանկերով ու առաջին անգամ հնարավորություն են տալիս պատկերացում կազմել ժայռապատկերների տեղային տարածվածության և ի հայտ գալու հաճախականության մասին:

6. Հայագիտության մեջ ժայռապատկերները գրեթե չեն քննարկվել իրենց հնագիտական համատեքստում: Հնագիտական համապատկերի վերականգնման փորձն այս աշխատանքի ամենակարևոր նորույթներից է: Համատեքստի նման քննարկումը եական հիմքեր է ստեղծում ժայռապատկերների թվագրության համար. այս խնդրով նախկինում

Էլ կարծիքներ են արտահայտվել, բայց երբեք դրանք այսքան հիմնավորված չեն եղել, ինչպես քննարկվող աշխատանքում է:

7. Տարածական առանձնահատկությունների վերլուծության արդյունքում ժայռապատկերները բաժանվել են ցածրադիր և բարձրադիր գոտիների, ինչը մեթոդապես շատ ճիշտ է՝ հաշվի առնելով Հայկական լեռնաշխարհի ուղղահայաց գոտիականությունը: Պարզվել է նաև, որ ժայռապատկերներն ամենահաճախն ի հայտ են գալիս պատմական Այրարատի տարածքում:

8. Հեղինակը ցույց է տալիս, որ Հայաստանում ժայռապատկերումը սկզբնավորվել է մ.թ.ա. VII-V հազ. միջև, նստակեցության և երկրագործության անցնելուն համընթաց, և հետզհետե անկում ապրել՝ հաջորդ, առավել հարմար գրահամակարգերի լայն կիրառման հետևանքով, ինչը կարծում ենք, տրամաբանական եզրակացություն է:

9. Կարևոր է Հայաստանի ժայռավեստի դիտարկումը համաշխարհային համապատկերում: Աշխարհի մոտ 20 հազար հնավայրերում հայտնաբերված միլիոնավոր ժայռանկարների բովանդակային, թեմային, տեղագրական և ոճատեխնիկական բաշխումը որոշակիորեն տարբեր է հայաստանյանից. առանձնացված 31 խմբերի և 14 ոճակատարողական տեսակների մի մասը բացակայում է կամ թույլ է ներկայացված: Դեպի Փոքր Ասիա, Արևմտյան և Հյուսիսային Եվրոպա, Սիբիր, Կենտրոնական Ասիա, Իրան, Հյուսիսային Միջագետք և Հյուսիսային Աֆրիկա ուղղություններով զգալիորեն նվազում է պատկերների քանակը և բազմազանությունը, թե՛ մեկ ժայռապատկերում, և թե՛ ժայռապատկերախմբում աճում է կրկնվածության աստիճանը, իսկ որոշ կարևոր թեմային խմբեր (աստղաքարտեզ, օրացույց, տեղանքի գծանշում, հեռանկար, տառանման նշան, վիշապ, ևն) գրեթե բացակայում են: Կարծում ենք, որ հեղինակն այստեղ բացահայտել է շատ կարևոր օրինաչափություն:

10. Հեղինակն իր եզրակացություններն անում է սեփական հետազոտությունների արդյունքում, բայց նաև ներկայացնելով ուսումնասիրման ամբողջական պատմությունը և օգտագործելով աննախադեպ՝ 876 անուն գրականություն, 55 սկզբնաղբյուր ու 28 բառարան, հանրագիտարան, կատալոգ՝ ընդհանուրը՝ մոտ 960 միավոր:

#### Դիտողություններ և առաջարկներ:

Քննարկվող ատենախոսության մեջ առկա են որոշ խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ տեխնիկական բնույթի են և ամենևին էլ չեն նսեմացնում կատարված մեծ աշխատանքը:

տանքի կարևորությունը:

1. Հեղինակն, ինչպես նշվեց, օգտագործում է տվյալների մեծ շտեմարան: Հավելված 2-ում ներկայացվում են ժայռապատկերների միջավայրի, ուղեկցող նյութի հետ կապված չափանիշները: Մեթոդը շատ ճիշտ է, բայց կոնկրետ տվյալներ չեն բերվում: Այս իմաստով բացակայում է քանակական վերլուծությունը և վիճակագրությունը, որոնց հիման վրա կարող էին ձևավորվել դիագրամներ և մանրամասների քարտեզներ: Հետագայում, աշխատանքը հրատարակության պատրաստելիս, կարելի է բացել տվյալների շտեմարանը՝ դիագրամների և քարտեզների ձևով (որոնք կարտահայտեն ժայռապատկերների ենթախմբերը, ենթատիպերը, առանձին մոտիվները ևն):

2. Ոչ մի կասկած չկա, որ հնագույն Հայաստանում եղել են պատկերացումներ լուսատուների մասին, դրանք պաշտվել են, դրանց մասին առասպելներ են ստեղծվել: Սակայն, կարծում ենք, որ հնաստղագիտական մոտեցումները այնուամենայնիվ չափազանցված են: Կարելի է խոսել աստղային երկնքի դիտարկումների մասին, բայց ոչ գերռացիոնալ, կազմակերպված դիտումների: Օրինակ, մենհիրների դասավորությունը, որն ընդունվում է որպես աստեղային երևույթները մեկնելու չափանիշ, շատ բարդ է ենթարկել մեկնության, քանի որ դրանց ուղղվածությունը դարերի ընթացքում փոխվել է, և դրանցից շատ քչերն են իրենց նախնական տեղում:

3. Հղումների ձևը միասնական չէ՝ մե՛կ տարեթվով, մե՛կ առանց դրա: Կառաջարկեինք հրատարակության ժամանակ ընտրել մեկ միասնական՝ տարեթվով ձևը բոլորի համար: Ներբեռնված հղումների ցանկում (էջ 254) ճիշտ կլիներ նշել նաև ներբեռնման օրը (քանի որ դրանք երբեմն փոփոխվում են): Կառաջարկեինք նաև հրատարակության ժամանակ ձերբազատվել որոշ սիրողական աշխատանքների հղումներից (Սոլական 2010, Վահրադյան, Վահրադյան 2010, Հերունի 1998, Геруни 1998), թեև պարզ է, որ դրանք զուտ ինֆորմատիվ բնույթի են:


4. Նկարային աղյուսակներում տեղադրված նյութերի աղբյուրը հղվում է, սակայն ճիշտ կլիներ ունենալ Աղյուսակների առանձին ցանկ՝ բացատրություններով և նկարագրությամբ: Դրա բացակայությունը դժվարացնում է ընթերցողի գործը:

5. Էջ 45-ում վիշապաքարի տեղը նշված է «Կարմիր սար հնավայր, Դոդս գյուղի հովտունք», այնինչ, պետք է լինի՝ «Ավան գյուղի հովտունք»: Իսկ աղ. 112ա-ի վիշապաքարը ոչ թե Վանստանից է, այլ Գեղասարի մոտակայքից:

**Եզրակացություն:**

Քննարկվող ատենախոսությունը հեղինակի գրեթե 30 տարվա աշխատանքի արդյունք է: Այն ներկայացված է հրատարակված 25 գիտական հոդվածներում, հանրապետական և միջազգային գիտաժողովների 45 զեկուցումներում, այդ թվում՝ արտասահմանում (Վրաստան, Իտալիա, Ռուսաստանի Դաշնություն, Հունաստան, Ղազախստան, Չինաստան): Աշխատանքը կարևոր ներդրում է Հին Եվրասիայի, և մասնավորապես դրա հայկական ենթագոտու ժայռապատկերային արվեստի հետազոտման գործում: Այն էական հիմքեր է ստեղծում Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների տարածական, ժամանակային ու բովանդակային առանձնահատկությունները ճիշտ գնահատելու համար:

Ուստի, գտնում եմ, որ հրաապարակային պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԲՈԿ-ի ներկայացված պահանջներին: Հետևապես, հեղինակ Կարեն Թոխաթյանը արժանի է իր հայցած՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝  ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ Արսեն Բորոխյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ Ա. Բորոխյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն

Ա. Բորոխյան

10.12.2020

